ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

ԲՅՈՒՋԵ ԲՈԼՈՐԻ ՀԱՄԱՐ

Ծրագրի աշխատանքային խմբի արձանագրություն

ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

«Բյուջե բոլորի համար (Budget4All)» ծրագիրն իրականացվում է Գորիսի Կանանց զարգացման «Ռեսուրս կենտրոն» Հիմնադրամի կողմից՝ Հայաստանի Սյունիք, Վայոց Ձոր և Տավուշ մարզերում, Վիններթ Հայաստան կանանց ռեսուրս կենտրոնների ցանցի 5 անդամ կազմակերպությունների՝ «Մեղրու կանանց Ռեսուրս կենտրոն» ՀԿ-ի, «Կապանի կանանց Ռեսուրս կենտրոն» ՀԿ-ի, «Սիսիանի կանանց Ռեսուրս կենտրոն» Հիմնադրամի, «Եղեգնաձորի կանանց Ռեսուրս կենտրոն» հիմնադրամի և «Իջևանի կանանց Ռեսուրս կենտրոն» հիմնադրամի հետ համագործակցությամբ՝ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ իրականացվող կոնսորցիումի միջոցով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհների շրջանակներում: Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրամիության կողմից:

Ծրագրի հիմնական նպատակն է նպաստել Սյունիքի, Վայոց Ձորի ու Տավուշի մարզերի 10 խոշորացված համայնքների տեղական բյուջեներում և տեղական մակարդակում իրականացվող ծրագրերում երեխաների և գենդերային զգայուն բյուջետավորման արդյունավետ մեխանիզմների մշակմանն ու ներդրմանը, ինչպես բարելավել ՔՀԿ-ների մասնակցության մեխանիզմները ՀՀ պետական բյուջեի վերաբերյալ քննարկումների և հանրայնացման գործընթացներում, ինչպես նաև բարձրացնել նրանց մասնակցությունը այդ մեխանիզմների բարելավման, մշտադիտարկման, ջատագովության գործընթացներում:

Ծրագրի թիրախային համայնքներն են ՀՀ Սյունիքի, Վայոց Ձորի և Տավուշի մարզերի խոշորացված 10 համայնքները (Մեղրի, Կապան, Գորիս, Տաթև, Տեղ, Սիսիան, Գորիայք, Արենի, Գլաձոր, Բերդ):

Հանդիպման ընթացքը

2019թ. Մայիսի 30-ին Երևանում անցկացվեց աշխատանքային հանդիպում-քննարկում, որին մասնակցում էին ՀՀ Տարածքային Կառավարման նախարարության ՏԻՄ վարչության պետ

WINNET ARMENIA

պարոն Աշոտ Գիլոյանը, ծրագրի բյուջեի մասնագետ Սվետա Հարոսյանը, ծրագրի ղեկավար Ռուզաննա Տոռոզյանը և ծրագրի համակարգող Նվարդ Խաչատրյանը:

Օրակարգում՝

- Ծրագրի արդյունքների ներկայացում
- ,,Քաղաքացու բյուջեի ուղեցույցի,, ներկայացում
- Արենի համայնքի 2019թ պարզեցված բյուջեի օրինակի ներկայացում

Ծրագրի ղեկավար Ռուզաննա Տոռոզյանի կողմից ներկայացվեց ծրագրի հաշվետու ժամանակահատվածում իրականացված աշխատանքների ընթացքը: Հաշվետու ժամանակահատվածում որպես կարևոր ձեռք բերում եղավ՝ ՀՀ ֆինանսների փոխնախարար պարոն Բրուտյանին ուղղած գրությունը բյուջետային գործընթացի ընթացքում ՀՀ կառավարության և տարածքային կառավարման մարմինների հետ՝ «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի շրջանակներում ստեղծված և/կամ հզորացվող ոլորտային քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կոալիցիաներ/ցանցերի հետ իրականացնելու քննարկումներ՝ բյուջետային հայտերում ներառվելիք ծրագրերը ավելի արդյունավետ մշակելու համար: Այդ նպատակով «Վիններթ Հայաստան կանանց ռեսուրս կենտրոնների ցանց»-ի կողից իրականացվող ծրագրի շրջանակներում փորձագետ Հովհաննես Ավետիսյանի կողմից անց են կացվել ուսուցումներ՝ ուժեղացնելու կոալիցիաների անդամ ՔՀԿ-ների վերոնշյալ կարողությունները, որպեսզի ճյուղային նախարարությունների, կոմիտեների և գերատեսչությունների հետ հանդիպումների ընթացքում ՔՀԿ-ների կոլաիցիաները արդյունավետ կարողանան իրկանացնել քննարկումները:

Այնուհետև ծրագրի փորձագետ Սվետա Հարոսյանի կողմից ներկայացվեց ,,Քաղաքացու բյուջեի ուղեցույցը,,, որը ուղենշում է պատրաստելու քաղաքացու համար բյուջետային փաստաթղթեր, ինչը կապահովվի քաղաքու համար համայնքային բյուջեների հասանելիությունը և կիսթանի այդ գործընթացի վերաբերյալ հանրային իրազեկվածությունը:

Սվետա Հարոսյանը նշեց , որ ՀՀ կառավարությունը 2018թ հրապարակեց Քաղաքացու բյուջեի առաջին օրինակը, և այդ փաստաթղթի պաշտոնական անվանումը պետական բյուջեի համառոտ ուղեցույց է : Վերջինս 36 էջից բաղկացած համապարփակ զեկույց է, որտեղ նկարագրվում է բյուջեն, բյուջեի մշակման գործընթացը, ՀՀ սոցիալ տնտեսական իրավիճակը բնութագրող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսումները, 2018 թվականի բյուջետային շրջանակը, եկամուտներն ու ծախսերը,

ինչպես նաև պետական բյուջեի դեֆիցիտը և պետական պարտքը: Նա նշեց, որ եթե առաջին երկու բաժիններում հանրամատչելի ներկայացված է բյուջետային գործընթացի վերաբերյալ մի քանի տեսական դիտարկում և ՀՀ համախմբված բյուջեի կառուցվածքը, ապա հաջորդ բաժինները շարադրված են ավելի խրթին լեզվով, որոնք մասամբ հիշեցնում են ՀՀ կառավարության բյուջետային ուղերձի և համապատասխան բացատագրերի համառոտ տարբերակը: Նա նշեց, որ 2018թ օրինակի մեջ հպանցիկ թվարկել են միայն պետական բյուջեի ծախսային գերակայությունները՝ առանց հստակեցնելու քաղաքացիների համար՝ թե նշված ոլորտներում զարգացման ինչ ծրագրով ու ռազմավարությամբ է ուղղորդվելու կառավարությունը: Չեն առանձնացվել նաև հասարակության խոցելի խմբերը և սոցիալական անարդարության կրճատմանն ուղղված վարչարարական միջոցառումները, ինչպես նաև հանրային ծառայությունների բարելավմանն ուղղված քայլերը: Սվետա Հարոսյանը նշեց, որ ՔԲ-ն կայքում տեղադրելուց հետո ֆինանսների նախարարությունը ակտիվորեն չի իրազեկել հանրությանը նոր փաստաթղթի վերաբերյալ: Տեղեկություն չկա նաև, թե արդյոք փաստաթղթի մշակման ընթացում նախարարությունը խորհրդակցություններ է ունեցել ոլորտում հետաքրքրված ՀԿ-ների հետ թե ոչ:

Այնուհետև Սվետա Հարոսյանը ներկայացրեց ծրագրի շրջանակներում մշակված ուղեցույցը, որի առումով ,,Քաղաքացու բյուջեն,, պետք է մշակվի կառավարության կողմից՝ քաղաքացիների հետ քննարկումների արդյուքում, այն հանրայնացնում է բյուջեն և բարձրացնում վերջինիս հանրային ընկալման աստիճանը: Սվետա Հարոսյանի դիտարկման, Քաղաքացու Բյուջեի ուղեցույցում մեթոդական ցուցումները նշում են, որ քաղաքցու բյուջեն պետք է կենտրոնանա բյուջեի պլանավորման փաստաթղթերի վրա և այն պետք է հրապարակվի բյուջեի հետ միաժամանակ:

Եվ ամփոփելով նա նշեց, որ քաղաքացիների բյուջեն կարող է կարեւոր տեղեկություններ տրամադրել նույնիսկ քաղաքացիական հասարակության այն խմբերի համար, որոնք տեղական բյուջեների վերլուծություններ են իրականացնում:

Պարոն Գիլոյանին ներկայացվեց նաև Արենի համայնքի օրինակով պարզեցված բյուջեն, որը իր մեջ ներառում է տվյալներ Արենի համայնքի մասին, շատ պարզ և հասկանալի տեղակտվություն Արենի համայնքի 2019թ բյուջեի եկամուտների և բյուջեի ծախսերի մասին և հավելվածներ՝ որոնք ներկայացնում եմ թե ինչպես է գոյանում համայնքի բյուջեի միջոցները, ինչպես են փոփոխվում համայնքի բյուջեի ծախսերը երկու տարում, որ ոլորտներում են ծախսվում համայնքի բյուջեի միջոցները և ինչպիսի ծախսեր են կատարվում հանայնքի բյուջեի միջոցների հաշվին: Սվետ Հարոսյանի դիտարկմամբ, սա շատ պարզ ու մատչեի տեղեկություն է , որը հասկանալի է ցանկացած բնակչի, քաղաքացու համար:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

Պարոն Գիլոյանը նշեց, որ CIZ /Լավ Տեղական Ինքակառավարում/ ծրագրի շրջանակներում փորձագիտական աշխատանքներ են կատարվել, որի արդյուքում մշակվել են խոշորացված համայքների ծրագրային բյուջեները, որոնք հասանելի են տեղական կայքերում: Նրա դիտարկմամբ Արենի համայնքի բյուջեի օրինակը իր մեջ ամփոփում է շատ ընդհանուր և պարզ տեղեկություն համայնքի ընդհանուր բյուջեի գոյացման, եկամուտների և կարևոր ծախսերի մասին շատ տեսանելիորեն և այն լավ օրինակ է ոչ միայն Արենի համայնքի համար, այլ նաև այն առաջարկեց տարածել նաև մյուս համայնքների համար:

Ամփոփելով հանդիպումը, ծրագրի ղեկավար Ռուզաննա Տոռոզյանը նշեց, որ ծրագիրը շուտով կավարտի, սակայն ՔՀԿ-ները կշարունակեն ակտիվ ներգրավվածություն ապահովվել պետական և տեղական բյուջեների հանրային քննարկումներին և մշտադիտարկման գործընթացներում և իրենց կառուցողական գործունեությամբ կաջակցեն վերջիններիս բարելավման գործընթացներում:

Աշխատանքային հանդիպմանը մասնակցեցին՝

ՏԿՆ ՏԻՄ վարչության պետ պարոն Ա. Գիլոյան _____

Բյուջեի փորձագետ Սվետա Հարոսյան _____

,, Բյուջե բոլորի համար,, ծրագրի ղեկավար Ռուզաննա Տոռոզյան_____

,,Բյուջե բոլորի համար,, ծրագրի համակարգող Նվարդ Խաչատրյան _____

30.05.2019թ

WINNET
ARMENIA